

## ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Հինգշաբթի, 18 Սեպտեմբերի, 2008

Չորեքշաբթի, Սեպտեմբերի 17-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցության Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի պատուիրակությունը հանդիպում է ունեցել աշխատանքային այցելով Լոս Անջելոսում գտնուող Հայաստանի տնտեսության նախարար Ներսես Երիցեանի հետ:

ՀՀԴ պատուիրակության անդամներ՝ Սեդո Պոյաճեանը, Յարութին Մանուկեանը եւ Յովան Թաշճեանը շուրջ մէկ ժամ տեւած սոյն հանդիպման ընթացքում նախարարին եւ ներկայացրել Հայաստանի տնտեսական ներկայիս իրավիճակից բխած իրենց մտահոգություններն՝ ընկերային խնդիրների վերաբերեալ, մասնաւորաբար շեշտը դնելով եկամտի անհաւասար բաշխման, մենաշնորհների եւ ստուերային տնտեսության ստեղծած անարդարությունների անմիջական վերացման անհրաժեշտութեան վրայ: ՀՀԴ պատուիրակության անդամները նաեւ անդրադարձել են ամերիկահայ տնտեսական ներուժը Հայաստանում լիարժեքօրէն օգտագործելու անհրաժեշտ նախապայմաններին, ընդգծելով շահագործումների, անարդարությունների եւ դիւանակալական ձգձգումների վերացման կարելոթիւնը: Զրոյցի հիմնական մասը կենտրոնացել է ՀՀԴ Հայ Դատի յանձնախմբի Վաշինգտոնում ծաւալած գործունեութեան վրայ, մասնաւորապէս տեղեկութիւններ տրուելով Հայաստանի ու Ջաւախքի օգտին ամերիկեան տնտեսական յաւելեալ օժանդակութիւն ապահովելու Հայ Դատի յանձնախմբի կողմից գործադրուող ջանքերի մասին: Նախարարին նաեւ տեղեկացուել է, որ Դաշնակցութիւնը եւ Հայ Դատի յանձնախումբը հետեւողականօրէն աշխատանքներ են տանում, որպէսզի Սիացեալ Նահանգների կողմից Վրաստանին տրուելիք օժանդակութեան որոշակի մասը յատկացուի Ջաւախքի զարգացման ծրագրերին: Նշուել է, որ Հայ Դատի յանձնախումբը նաեւ աշխատանք է տանում, որպէսզի Հայաստանին տրամադրուող ամերիկեան օժանդակութիւնը մեծապէս բարձրացուի՝ բարեկարգելու համար տնտեսական այն վնասները, որոնք Հայաստանը կրել է Վրաստանի դեպքերի ընթացքում առեւտրական ճանապարհների խանգարման պատճառով: Խօսուել է նաեւ Հազարամեակի ծրագրի ներկայ իրավիճակի եւ դրա գործադրութեան ժամանակացոյցի, ինչպէս նաեւ Հայ-թուրքական սահմանի բացման հաւանական այն հետեւանքների մասին, որոնք ընդհանրապէս կարող են առաջանալ Հայաստանի տնտեսութեան ոլորտում, իսկ մասնաւորաբար՝ Հայաստանի աշխատուժի, կենսամակարդակի եւ արդիւնաբերութեան բնագաւառներում: Հանդիպմանը ներկայ է եղել նաեւ Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիւոյեանը:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտեի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: